

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ


28 ապրիլի, 2020 N 10

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 5
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի ապրիլի 14-ի «Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմով պայմանավորված անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 5 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) 2-րդ կետից հանել «Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ, Կոճողոտ, Հաթերք և» բառերը.
 - 2) 2-րդ կետում «համայնքների» բառը փոխարինել «համայնքի» բառով.
 - 3) 2-րդ և 3-րդ կետերում «տարածքներ» բառը՝ համապատասխան հոլովածներով, փոխարինել «տարածք» բառով՝ համապատասխան հոլովածներով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ